*Նախագիծ*

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N** ***«ԳՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-2014/5***

ք. Երևան ___ _________________ 2014թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «_________________» -ն, ի դեմս ___________, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված N 2) Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված վառելիքի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին (Ստացողին) Պայմանագրի Հավելված N 2-ով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Մատակարարն Ապրանքը հասցնում է Պատվիրատուին (Ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցել Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 եթե հանձնվել է Պայմանագրով սահմանվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնել Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքն ընդունելուց և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը և վճարել Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքն ընդունելուց և պահանջել վճարել Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում՝ Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարել Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Մատակարարից պահանջել հատուցել վնասները, եթե Պատվիրատուը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով, պայմանագրի լուծումից հետո, ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրաքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

**3.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին: Եթե Մատակարարը ողջամիտ ժամկետում չի տնօրինում Ապրանքը, Պատվիրատուն իրավունք ունի իրացնել Ապրանքը կամ այն վերադարձնել Մատակարարարին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքները ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից.

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները.

3.2.6 **Ապահովել սույն գործարքի ավելացված արժեքի հարկից ազատման դիմումի ներկայացումը ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:**

**3.3 Մատակարարն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Մատակարարը պարտավոր է՝**

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, Ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Պատվիրատուին հանձնել դրա պատկանելիքները:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում.

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում.

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք.

3.4.5 Պատվիրատուին հանձնել Պայմանագրի Հավելված N 1-ով և N 2-ով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը.

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված վնասները.

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,

3.4.12 ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Պայմանագրով Մատակարարի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ________________ (__________________________________________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, և ______________ (__________________________________________) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է Պայմանագրի Հավելված N 2-ում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ

օրենդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով, նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Մատակարարն Ապրանքը հանձնում է Պայմանագրով նշված Պատվիրատուին (Ստացողին)՝ Պայմանագրի Հավելված N 2-ում նշված ծավալներով և ժամկետներում.

6.2 Մատակարարը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է երկկողմանի հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուն կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Մատակարար և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Մատակարարը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման դրույթներին համապատասխան:

9.8 Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

9.10 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովումը վերադարձվում է Մատակարարին՝ Պայմանագրի կատարման ավարտից 20 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ կատարմանը համամասնորեն:

9.11 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ՄԱՏԱԿԱՐԱՐ** |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն<br>ք. Երևան, Կառավարության շենք N 3<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013105029, Հ/Հ 900013104063<br>ՀՎՀՀ 02507171 | |
| ____________________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ____________________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |